1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 07-001-0506-0001 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 107/1:
2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 238 շենքի 29 բնակարանի բնակիչ Արիեստակ Մկրտչյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 107/1 հասցեում գտնվող 28.83քմ արտաքին մակերեսով բնակելի նպատակային նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական:
3.Ավտոտնակը և դրա սպասարկման ու պահպանման համար նախատեսված 28.83քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

18 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*18 դեկտեմբերի 2023թվականի N 1531*

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Գոռ Ափյանի լիազորված անձ Հարութ Ղարիբյանի 2022 թվականի հուլիսի 08-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2022WKECKY ծածկագիրը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2023 թվական նոյեմբերի 13-ի թիվ 79 մասնագիտական եզրակացությունը.

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝</u>*

1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 07-001-0111-0001 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 22/7:
2.Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Գոռ Ափյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 22/7 հասցեում գտնվող 27.18քմ արտաքին մակերեսով բնակելի նպատակային նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական:
3.Ավտոտնակը և դրա սպասարկման ու պահպանման համար նախատեսված 27.18քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

18 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*19 դեկտեմբերի 2023թվականի N 1532*

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ
ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 65-րդ հոդվածով.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.2023 թվականի դեկտեմբերի 22-ին՝ ժամը 11.00-ին, հրավիրել Հրազդան համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ ելնելով քննարկվող հարցերի հրատապությունից:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

19 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*19 դեկտեմբերի 2023թվականի N 1533*

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՅԳԵՏՆԱԿԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՎԱՐՏ ՇԻՆՈՒԹՅԱՆ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿՆԵՐԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԵՆԱՊԱՏԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներով, և հիմք ընդունելով Սամվել Զորկինի Բարբարյանի 2023 թվականի դեկտեմբերի 13-ի դիմումը, բանվորների և ծառայողների այգեգործական ընկերության կողմից 1985 թվականի ապրիլի 11-ին տրված այգեգործի անդամատոմսը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023R9DG6D ծածկագիրը.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

1.Օրինական ճանաչել Սամվել Զորկինի Բարբարյանին պատկանող Հրազդան քաղաքի Վերին Աղբյուրակ այգեգործական զանգվածի 9-րդ փողոց 21 հասցեում գտնվող 500.0 քմ հողամասում ինքնակամ կառուցված 41.18քմ արտաքին մակերեսով այգետնակը, ինքնակամ կառուցված 19.84քմ արտաքին մակերեսով անավարտ շինությունը, ինքնակամ կառուցված 1,37քմ, 0,63քմ, 52,96քմ և 2,68քմ մակերեսներով աստիճանավանդակները, ինքնակամ կառուցված 11.94քմ մակերեսով հենապատը:
2.Հողամասի սահմանները որոշվում են ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով: 3. Ինքնակամ կառուցված այգետնակը, ինքնակամ կառուցված անավարտ շինությունը, ինքնակամ կառուցված աստիճանավանդակները, ինքնակամ կառուցված հենապատը կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարը չի գանձվում:
4.Ինքնակամ կառուցված այգետնակի, ինքնակամ կառուցված անավարտ շինության,

ինքնակամ կառուցված աստիճանավանդակների, ինքնակամ կառուցված հենապատի պահպանումը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

19 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*19 դեկտեմբերի 2023թվականի N 1534*

ԱՐՏԱԿ ՄԵՐՈՒԺԱՆԻ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնում նախապատրաստված նյութերի հիման վրա: Ոստիկանության Հրազդանի բաժնի ՀՈԲ տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Կ. Ցուգունյանի կողմից կազմված արձանագրության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասում շրջայց իրականացնելիս ոստիկանության Հրազդանի բաժնի աշխատակիցները հայտնաբերել են, որ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 85 շենքի հարևանությամբ՝ Բերդ համայնքի Պառավաքար բնակավայրի 2 փողոց 1 փակուղի 1 տան բնակիչ Արտակ Մերուժանի Աղաջանյանը իրականացնում է փողոցային առևտուր՝ վաճառելով մրգեր, ինչն առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի հատկանիշներով, այն է՝ ոչ սահմանված տեղերում առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Հարուցված վարչական վարույթի վերաբերյալ ծանուցված Արտակ Մերուժանի Աղաջանյանը չի ներկայացել վարչական վարույթի գործի քննությանը, ուստի՝ ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 267-րդ հոդվածով, գործը քննվել է վերջինիս բացակայությամբ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության արդյունքում վարչական մարմինը, քննելով գործում առկա բոլոր փաստական հանգամանքները, հաստատված է համարում, որ կատարվել է իրավախախտում, որի համար պատասխանատու է Արտակ Աղաջանյանը, սակայն թույլ տրված խախտումն ունի նվազ նշանակություն: Խախտումը կրկնվելու դեպքում վարչական մարմինը

ձեռնամուխ է լինելու վարչական ներգործության այլ միջոցներ կիրառելու:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն, այն է՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարին կից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 82 արձանագրությունը.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝*

1. Արտակ Մերուժանի Աղաջանյանին ազատել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 162-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտակ Մերուժանի Աղաջանյանին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

19 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *ՈՐՈՇՈՒՄ*

*19 դեկտեմբերի 2023թվականի N 1535*

### ՋԱՆԻԲԵԿ ԴԱՎԹԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնում նախապատրաստված նյութերի հիման վրա: Ոստիկանության Հրազդանի բաժնի ՀՈԲ տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Կ. Ցուզունյանի կողմից կազմված արձանագրության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասում շրջայց իրականացնելիս ոստիկանության Հրազդանի բաժնի աշխատակիցները հայտնաբերել են, որ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի «ՏԻՎԱ» սուպերմարկետի հարևանությամբ Սևան քաղաքի 5-րդ Միկրո թաղամասի 3 շենքի, 4 բնակարանի բնակիչ Ջանիբեկ Դավթի Սիմոնյանը իրականացնում է փողոցային առևտուր՝ վաճառելով «սիգ» ձկնատեսակ, ինչն առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի հատկանիշներով, այն է՝ ոչ սահմանված տեղերում առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Հարուցված վարչական վարույթի վերաբերյալ ծանուցված Ջանիբեկ Դավթի Սիմոնյանը, չի ներկայացել վարչական վարույթի գործի քննությանը, ուստի՝ ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 267-րդ հոդվածով, գործը քննվել է վերջինիս բացակայությամբ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության արդյունքում վարչական մարմինը, քննելով գործում առկա բոլոր փաստական հանգամանքները, հաստատված է համարում, որ կատարվել է վարչական իրավախախտում, որի համար պատասխանատու է Ջանիբեկ Սիմոնյանը:

Ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 8-րդ, 32-րդ հոդվածներով, 162-րդ հոդվածով, $219^{1}$-րդ և 305-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարին կից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 12-ի N 81 արձանագրությունը.

*<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝</u>*

1. Ջանիբեկ Սիմոնյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակել տուգանք 70.000 / յոթանասուն հազար / դրամ գումարի չափով:
2. Տուգանքի վճարումը կատարել սույն որոշման ստացման պահից 15-օրյա ժամկետում հետևյալ հաշվեհամարով՝ 900125001488:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ որոշման վերաբերյալ իրազեկվելու պահից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ջանիբեկ Սիմոնյանին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

19 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*19 դեկտեմբերի 2023թվականի N 1536*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Ռազմիկ Պետրոսյանի 2023 թվականի դեկտեմբերի 15-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Սոլակ գյուղի 8-րդ թաղամասի թիվ 74 տան բնակիչ Ռազմիկ Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական 1943316, տրված՝ 2004 թվականի հունիսի 30-ին/ Կոտայքի մարզի Սոլակ գյուղում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Սոլակ, 1-ին փողոց, 8-րդ նրբանցքի 5-րդ փակուղի 4:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

19 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*19 դեկտեմբերի 2023թվականի N 1537*

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՐՍՊԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Ռոբերտ Ռաֆիկի Պողոսյանի 2023 թվականի դեկտեմբերի 13-ի դիմումը, «Կոտայքի մարզ» նոտարական տարածքի նոտարի կողմից 2023 թվականի ապրիլի 20-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ գրանցված սեղանամատյան թիվ 1490, 1491, ժառանգական գործ թիվ 107, 1987 թվականի ապրիլի 28-ի տեխնիկական պասպորտը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023ZDQHBD ծածկագիրը.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Օրինական ճանաչել Ռոբերտ Ռաֆիկի Պողոսյանին պատկանող Հրազդան քաղաքի Կոճոռ 14 հասցեում գտնվող 1178.3քմ հողամասում ինքնակամ կառուցված 81.96քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, ինքնակամ կառուցված 29.32քմ արտաքին մակերեսով ավտոտնակը, ինքնակամ կառուցված 4.47քմ մակերեսով պարիսպը :
2.Հողամասի սահմանները որոշվում են ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
3.Սույն որոշման ընդունման օրվանից 81.96 քմ արտաքին մակերեսով ինքնակամ կառուցված բնակելի տան օրինականացման համար սահմանված 137.500 /հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր / դրամ գումարը, 29.32 քմ արտաքին մակերեսով ինքնակամ կառուցված ավտոտնակի օրինականացման համար սահմանված 49.500 /քառասունինը հազար հինգ հարյուր / դրամ գումարը, 4.47 քմ մակերեսով ինքնակամ կառուցված պարսպի օրինականացման համար սահմանված 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ գումարը վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504

գանձապետական հաշվին:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Ինքնակամ կառուցված բնակելի տան, ինքնակամ կառուցված ավտոտնակի, ինքնակամ կառուցված պարսպի պահպանումը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

6.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

19 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*19 դեկտեմբերի 2023թվականի N 1538*

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՏԻ, ԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ԿԱՅԱՆԻ, ԱՌԵՎՏՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՏԻ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀԱՐԹԱԿԻ, ՊԱՐՍՊԻ, ՀԵՆԱՊԱՏԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ, ԴՌԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ , 8-րդ բաժինների պահանջներով, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնով, հիմք ընդունելով 2023 թվականի դեկտեմբերի 11-ին <<Հաբշին նախագիծ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված շինության հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023UZYV8R ծածկագիրը և Դրաստամատ Ղարիբյանի 2021 թվականի հունվարի 27-ի դիմումը.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Շահումյան փողոց թիվ 42 տան բնակիչ Դրաստամատ Շավարշի Ղարիբյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի վկայականներ N 2294097, տրված՝ 2006 թվականի նոյեմբերի 30-ին, N 1082953, տրված՝ 2004 թվականի դեկտեմբերի 24-ին և N 2641157, տրված՝ 2010 թվականի սեպտեմբերի 7-ին) Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Շահումյան փողոց 3-րդ նրբանցք 2/6, Րաֆֆու փողոց 3-րդ նրբանցք 2/4 և Րաֆֆու փողոց 3-րդ նրբանցք 2/5 հասցեներում գտնվող միավորված գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան,

Հարավային թաղամաս, Ս.Շահումյան փողոց 15:

2.Օրինական ճանաչել Դրաստամատ Շավարշի Ղարիբյանի կողմից Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Ս.Շահումյան փողոց 15 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող (սեփականության իրավունքի վկայականներ N 2294097, տրված՝ 2006 թվականի նոյեմբերի 30-ին, N 1082953, տրված՝ 2004 թվականի դեկտեմբերի 24-ին և N 2641157, տրված՝ 2010 թվականի սեպտեմբերի 7-ին) բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված հետևյալ շինությունները.

1) 361.62քմ արտաքին մակերեսով ավտոտեխսպասարկման կետը, լիցքավորման կայանը, առևտրի սպասարկման կետը ՝ օրինականացման վճարը սահմանել 940 300 (ինը հարյուր քառասուն հազար երեք հարյուր) դրամ,

2) ինքնակամ բացված ութ պատուհանները՝ օրինականացման վճարը սահմանել 10400 (տասը հազար չորս հարյուր դրամ), 3) ինքնակամ բացված մեկ դուռը՝ օրինականացման վճարը սահմանել 1300 (մեկ հազար երեք հարյուր) դրամ, 4) 46.02քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունը՝ օրինականացման վճարը սահմանել 119 700 (մեկ հարյուր տասնինը հազար յոթ հարյուր) դրամ, 5) 9.0քմ մակերեսով հարթակը՝ օրինականացման վճարը սահմանել 23 400 (քսաներեք հազար չորս հարյուր) դրամ,

6) 7.18քմ մակերեսով պարիսպը՝ օրինականացման վճարը սահմանել 18 700 (տասնութ հազար յոթ հարյուր) դրամ,

7) 10.20քմ մակերեսով հենապատը՝ օրինականացման վճարը սահմանել 26 600 (քսանվեց հազար վեց հարյուր) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի թիվ 900125001504 գանձապետական հաշվին:

4.Կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

6.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

19 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*20 դեկտեմբերի 2023թվականի N 1539*

### ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ, 7-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Մխիթար Միրզոյանի 2023 թվականի դեկտեմբերի 5-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 76 շենքի թիվ 25 բնակարանի բնակիչ Մխիթար Միրզոյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 28112023-07-0080, գաղտնաբառ՝ CVVPDA21DAB1/ Հրազդան քաղաքի Շահումյան փողոց 3 հասցեում գտնվող գույքի 0.04283հա մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Ս.Շահումյան փողոց 3/3, իսկ 0.21208հա մակերեսով մասինը թողնել նույնը՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Ս.Շահումյան փողոց 3:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

20 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*20 դեկտեմբերի 2023թվականի N 1540*

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳՈՒՄԱՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 38-րդ հոդվածով և հիմք ընդունելով Սամվել Օհանյանի 2023 թվականի դեկտեմբերի 19-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1. Հրազդանի համայնքապետարանի 900125001256 հաշվեհամարին, որպես պետական տուրք վճարված 10 000 /տասը հազար/ դրամ գումարը հետ վերադարձնել Հրազդան քաղաքի Մխիթար Սպարապետի փողոց 7 տան բնակիչ՝ Սամվել Աշոտի Օհանյանին՝ գործարքը չկայանալու հիմքով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

20 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*20 դեկտեմբերի 2023թվականի N 1541*

### ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N 208-Ն որոշման հավելվածը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.
1)օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի և իրացման՝ 3 (երեք) հատ,
2)հանրային սննդի կազմակերպման և իրականացման՝ 3 (երեք) հատ,
3)հեղուկ վառելիքի վաճառքի՝ 1 (մեկ) հատ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

20 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2023 թ. դեկտեմբեր 20 -ի
N 1541 որոշման

# ՑՈՒՑԱԿ
# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանակն անձի անվանումը/անուն,ազգ անուն/ կամ կազմակերպաիրավական տեսակը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ, գովազդի մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ա/Ձ «Անի Առաքելյան» | Ք. Հրազդան, Ռ. Միքայելյան, 2/30 | Ք. Հրազդան, Շահումյան 4/5 | ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում | 500 և ավելի քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 2. | Ա/Ձ «Անի Առաքելյան» | Ք. Հրազդան, Ռ. Միքայելյան, 2/30 | Ք. Հրազդան, Շահումյան 4/5 | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | 500 և ավելի քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 3. | Ա/Ձ «Քրիստինե Մարտիրոսյան» | Ք. Հրազդան, Մաքրավան Ա-4 թ-ս | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, Օգոստոսի 23/56 | ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում | մինչև 500 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 4. | Ա/Ձ «Քրիստինե Մարտիրոսյան» | Ք. Հրազդան, Մաքրավան Ա-4 թ-ս | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, Օգոստոսի 23/56 | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 500 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 5. | Ա/Ձ «Մանուկ Միրաքյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 258/13 | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի 80/1-82 | ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում | մինչև 200 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 6. | Ա/Ձ «Մանուկ Միրաքյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 258/13 | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի 80/1-82 | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 200 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 7. | Ա/Ձ «Սարգիս Միքայելյան » | Ք. Հրազդան, Վանատուր 383 | Ք. Հրազդան, Վանատուր 383 | հեղուկ վառելիքի վաճառք | լցակայան՝ հիմնական շինություն | 2023 թվականի տարվա համար |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*20 դեկտեմբերի 2023թվականի N 1542*

ՈՐՈՇՈՒՄԸ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԷ